ՌԱՖԱՅԵԼ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ «ԶՎԱՐՃԱԼԻ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Մ. Մ. ԳԻԼԱՎՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ

gilavyan.meline@mail.ru

Հոդվածում քննության են առվում նորագույն շրջանի հայ մանկագիր Ռաֆայել Հայրապետյանի հանելուկները: Ռաֆայել Հայրապետյանը այն բանաստեղծներից է, ով հիմնականում գրել է մանուկների համար ու մանուկների մասին: «Զվարճալի հանելուկներ» ժողովածուն նախատեսված է նախադպրոցական և կրտսեր տարիքի երեխաների համար, որը խիստ կարևոր է նրանց մտածողության, տրամաբանության, զարգացման, ճանաչման տեսանկյունից: Հանելուկը երևույթի կամ առարկայի հակիրճ, նկարագիրն է, ուր քողարկված տրվում են կռահվող երևեվույթի հատկանիշները, կամ առարկան փոխարինվում է վերջինիս հատկությունը ունեցող երևույթով:

Բանալի բառեր՝ *հանելուկ, արտահայտչամիջոց, լուծում, համեմատություն, գիտելիք, մանկական գրականություն:*

Հոդվածում անդրադառնում ենք Ռաֆայել Հայրապետյան հանելուկների յուրահատկություններին, ներկայացնում նրա դերը մանուկների մտածողության գործում:

Ռաֆայել Հայրապետյանը հաջողությունների է հասել մանկական պոեզիայում ՝ իր հետ բերելով թարմ շունչ, հետաքրքիր պատկերամտածողություն, յուրօրինակ գույներ, երանգներ ու հնչյուններ: Նրա մանկական բանաստեղծությունների առաջին

ժողովածուն «Կախարդական մորուք» (1996), որին հաջորդեցին «Փիղը այգեպան» (2006) , «Հումորի նժար» (2008), «Զվարճալի հանելուկներ» (2019) ժողովածուները, որոնք մանկական գրականություն բերեցին հետաքրքիր մտահղացումներ, հայրենասիրական, գեղագիտական դաստիրակության վերաբերյալ նոր մոտեցումներ:

Ռ.Հայրապետյանը հիմնականում գրում է նախադպրոցական տարիքի երեխաների համար ինչը, անշուշտ, շատ դժվար է: Դժվար է այն առումով, որ աշխարհը պետք է տեսնել այդ տարիքի երեխաների աչքերով, տեսնել միայն լուսավորն ու պայծառը, գեղեցիկն ու անխաթարը: Տեսնել այնպես,որ երեխայի լուսավոր երազները չմթագնվեն, ու նա ապրի միայն բարության դաշտում իրեն զգա բնության մի մասնիկը: Հեղինակի ստեղծագործությունների յուրահատկությունը նրա պարզությունն ու մատչելիություն է, երեխաները հաճույքով կարդում ու առանց դժվարության մտապահում են նրա փոքրիկ,սրամիտ բանաստեղծությունները, հանելուկները:

Ռ.Հայրապետյանի «Զվարճալի հանելուկներ» ժողովածուն լիարժեք պատկերացում է տալիս հանելուկի ժանրի զարգացման վերաբերյալ: Ժողովածուն, որի մեջ ընդգրկված հանելուկները նաև հիանալի փոքրիկ բնապատկերներ են ՝ գեղեցիկ, երեխայի հետաքրքրությունը շարժող համեմատություններով, երաժշտականությամբ և դյուրին անգիր արվող, ինչը նույնպես շատ կարևոր է մանկանկան ընթերցանության համար:

Հեղինակը գեղարվեստական հետաքրքիր լուծումներով և արտահայտչամիջոցներով ներկայացնում է 30-ից ավելի կենդանապատկերներ:

Քայլվածքը շատ դանդաղ է,
Բայց չկարծեք,թե կաղ է,
Ուր էլ գնա ինչ անի,
Իր տունն իր հետ կտանի: (Կրիա) [1, 10]

Կամ՝

Այ՛ քեզ հրաշք կենդանի,
Քթով գերան կտանի,

Խոտ է ուտում խրձերով,
Հսկաններ են ողջ ցեղով: (Փիղ) [2, 17]

Կամ՝

Շատ նման է նա գայլի,
Բայց գայլի հետ չի քայլի
Հավատարիմ ու արի
Բարեկամն է մեր բարի: (Շուն) [3, 18]

Հանելուկները իրանց մեջ խտացնում են սերունդների կենսափորձն ու իմաստությունը, և այս առումով դժվար է գերագնահատել նրանց դերը երեխաների ինացական ու ճանաչողական ունակությունների զարգացման գործում: Երեխան հանելուկը ընկալում է ոչ թե որպես ռեալ կենցաղային գաղտնիք, այլ իրենից ժամանակավորապես թաքնված բացահայտ իրողություն, որին հասու լինելու համար պահանջվում են որոշակի գիտելիքներ: Հանելուկներում առարկաների կամ երևույթների համեմատական նկարագրության,նրանց որևէ հատկանիշի հիման վրա մյուս առարկաներն ու հատկանիշները գտնելու միջոցով բավականին մեծ դաշտ է ստեղծվում երևակայության զարգացման համար:

Դասականների այս մոտեցումը հաջողությամբ կիրառվում է Ռ.Հայրապետյանի հանելուկներում:Ուսուցման ընթացքում նյութի ամփոփման կամ նրա շուրջ մտավոր-իմացական վարժություններ կատարելու տեսանկյունից այս մոտեցումը բավականին լավ արդյունք է տալիս: Երեխան սովորում է համեմատել ու համադրել երևույթները, հատկանիշները, առարկաների բնորոշ կողմերը, որը խիստ կարևոր է նրա տրամաբանության զարգացման, շրջապատի ճանաչման, անձնական վերաբերմունքի տեսանկյունից:

Ժողովածուում հանելուկները խմբավորված են ըստ թեմատիկայի ու բովանդակության առանձին շարքերում, ինչը նպաստում է երեխայի մտքի կենտրոնացմանը:

Մթնոլորտային երևույթներին նվիրված հանելուկներ՝

Մեկ ակնթարթում
Ծողաց ու անցավ,
Ծնվեց երկնքում:

Հողում մահցավ:
(Կայծակ) [4, 37]

Կամ՝

Ձմռանը գալիս է
Գանանը գնում
Մասիսի վրա
Հավիտյան մնում: (Ձյուն) [5, 11]

Ձմեռը ներկայացնում է նաև այլ կերպ.

Եկավ, բերեց առատ ձյուն,
Դաշտը ծածկեց վերմակով
Փողոց, տանիք, ծառ ու թուփ:
Ներկեց առատ – ճերմակով: [6, 10]

Բանաստեղծը իր մանուկ ընթերցողներին դաստիարակում է հայրենիքի, տան պաշտպանի հոգեբանությամբ, նրան ծանոթացնում ազգային սրբություններին, նրա մեջ սերմանում հայրենասիրական զգացմունքներ:

Մեզ բոլորիս քաջածանոթ
Երկիր է նա մի քարքարոտ
Ուր էլ լինենք նրա հանդեպ
Միշտ տածում ենք անհուն կարոտ:
(Հայաստան) [7, 20]

Կամ՝

Որքան մեծ լինենք
Եվ որքան հզոր
Այնքան թշնամին
Կլինի անզոր: (Բանակ) [8, 20]

Կամ՝

Այս աշխարհում քանի կանք
Կծածանվի շարունակ,
Գույներ ունի նա տեղին՝
Կարմիր, կապույտ ու դեղին:
(Հայկական դրոշ) [9, 8]

Գեղարվեստական պատկերը ընկալելի դարձնելու նպատակով հեղինակը դիմում է համեմատությունների օգնությանը: Օրինակ՝

Որ ծաղիկն է՝ ասեք որ
Շատ նման է արևի
Նա արևի հեռավոր
Ազգականն է երևի: (Արևածաղիկ) [10, 24]

Հանելուկներին երաժշտականություն են հաղորդում նմաձայնություններն ու նմանահունչ բառերը: Հաճախակի կրկնվող հնչյունների միջոցով բանաստեղծը օգնում է երեխային ավելի լավ պատկերացնել նկարագրվող առարկան, երևույթը, որոնք շատ «կարևոր իմաստային դեր են կատարում՝ ուժեղացնում են հուզական բովանդակությունը, ռիթմը, երաժշտականությունը» [12, 248]:

Տուկ,տուկ,տուկ,տուկ ով է, ով
Ինչ թռչուն է ձեզ ծանոթ
Ծառի բունը փորելով՝
Փնտրում է նա թրթուրներ: (Փայտփորիկ) [11, 38]

Հանելուկի լուծումը զվարճալի ժամանց է երեխայի համար:Այն ուրախություն է պատճառում նրան, ուժեզացնում վստահությունը սեփական անձի, մտքի նկատմամբ, ընդաձակում է նրա գիտելիքները բնության, առարկաների և կյանքի երևույթների մասին, միաժամանակ ծանոթացնելով ժողովրդական խոսքի արտահայտչականությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. *Հայրապետյան Ռ.* Զվարճալի հանելուկներ. Երևան, 2019. – 57 էջ.
2. *Գիլավյան Մ.* Նորոգույն շրջանի հայ մանկակա պոեզիայի միտումները. Երևան, 2000. – 85 էջ
3. *Ջրբաշյան Էդ.* Գրականության տեսություն. Երևան, 1980. – 248 էջ.

REFERENCES

1. *Hayrapetyan RR.* Zvarchali hanelukner. Yerevan, 2019. – 57 ej.
2. *Gilavyan M.* Noroguyn shrjani hay mankaka poyeziayi mitumnery. Yerevan, 2000. – 85 ej
3. *Jrbashyan Ed.* Grakanut'yan tesut'yun. Yerevan, 1980. – 248 ej

СБОРНИК РАФАЭЛА АЙРАПЕТЯНА «ВЕСЕЛЫЕ ПАЗЛЫ»

М. М. ГИЛАВЯН

АГПУ имени Хачатура Абовяна

В статье рассматриваются загадки современного армянского детского писателя Рафаэля Айрапетяна. Р.Айрапетян – один из поэтов, пишущих преимущественно для детей и о детях. Сборник «Забавные загадки» предназначен для детей дошкольного и младшего возрастов, что чрезвычайно важно с точки зрения развития их мышления, логики, роста и познания. Загадка — это краткое, описательное представление явления, понятия или объекта, где характеристики угадываемого замаскированы, или объект заменен характеристиками, обладающими узнаваемыми свойствами.
Ключевые слова: *загадка, средство выражения, решение, сравнение, знание, детская литература.*

RAFAEL HAYRAPETYAN'S "FUNNY PUZZLES" COLLECTION

M. M. GILAVYAN

Khachatur Abovyan ASPU

The article examines the riddles of the modern Armenian children's writer Rafael Hayrapetyan. Rafael Hayrapetyan is one of the poets who mainly wrote for and about children. The collection "Funny Riddles" is intended for preschool and younger children, which is extremely important from the point of view of their thinking, logic, development, and cognition. A riddle is a brief, descriptive description of a phenomenon or object, where the features of the phenomenon

being guessed are given in disguise, or the object is replaced by a phenomenon that has the latter's properties.

Key words: *riddle, means of expression, solution, comparison, knowledge, children's literature.*

Информация о статье: статья поступила в редакцию 3 ноября 2025 г., подписана к печати в № 1.CXXII (122).2026 30.10.2026.